# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԾՁԲ-18/4-(1)

ք.Երևան «20» 02 2018 թ.

ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունը ի դեմս վարչության պետ Ռ. Հովհաննիսյանի, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և <<Կարկոմավտո սերվիս>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Աշոտ Հովսեփյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն դաշտերը, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող

աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 7.127.900 (յոթ միլիոն հարյուր քսան յոթ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

### 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը

շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[1]:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[2]:

---

[1] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

[2] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն | «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | Ք. Երևան, Տիգրանյան 1, փակ. 1 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ |
| Հ/Հ 900011175016 | Հ/Հ 217002121630001 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 00131374 |
| Վարչության պետ Ս. Հովհաննիսյան | Տնօրեն Ա. Հովսեփյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
«20» փետրվարի 2018թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԾՁԲ-18/4-(I) ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը** |
| 1 | 50111130/1 | (see table below) | ՀՀ դրամ | 7127900 | 1 | Ք. Երևան | I,II և III եռ.2018 |

| հ/հ | SU-1,SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | 1 չափաբաժին | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) ըստ չափաբաժինների | | | | |
| | | ԳԱԶ և ՈՒԱԶ մակնիշի ա/մ | «Սադկո» մակնիշի բեռնատար և «ՊԱԶ» մակնիշի ավտոբուս ա/մ | ՎԱԶ և Շևրոլե Նիվա մակնիշի ա/մ | 5 տեղ առջևի և հետևի քաշող ա/մ | 5 տեղ և ավելի 4X4 տիպի ծառր տնտար ա/մ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | *SU-1 ներառվող ծառայությունների անվանում* | ԱՊՅ արտադրության ա/մ | | | Այլ պետությունների արտադրության մեքենաներ | |
| | **1.Շարժիչ** | | | | | |
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | 3600 | 3600 | 3600 | 6000 | 6000 |
| 2 | Առջևի և հետևի կախոցներ | 3600 | 6000 | 3600 | 3600 | 3600 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 4 | Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 | | | | | |
| | | 5 | Շարժիչի հանում և տեղադրում | 30000 | 48000 | 24000 | 48000 | 48000 | | | | | |
| | | 6 | Շարժիչի վերանորոգում | 54000 | 72000 | 48000 | 96000 | 96000 | | | | | |
| | | 7 | Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում | 21000 | 21000 | 21000 | 30000 | 30000 | | | | | |
| | | 8 | Շարժիչի գլխիկի վերանորոգում | 18000 | 18000 | 18000 | 18000 | 18000 | | | | | |
| | | 9 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում | 6000 | 3600 | 6000 | 6000 | 6000 | | | | | |
| | | 10 | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | | | | | |
| | | 11 | Փականի խցուկի փոխարինում | 120 | 120 | 120 | 120 | 120 | | | | | |
| | | 12 | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում | 120 | 120 | 120 | 120 | 120 | | | | | |
| | | 13 | Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում | 1200 | 0 | 1200 | 1200 | 1200 | | | | | |
| | | 14 | Ատամնավոր փոկի փոխարինում | 0 | 0 | 12000 | 18000 | 18000 | | | | | |
| | | 15 | Ծնկաձև լիսեռի խցուկի փոխարինում | 120 | 120 | 120 | 120 | 120 | | | | | |
| | | 16 | Միացային օղակների փոխարինում | 120 | 120 | 120 | 120 | 120 | | | | | |
| | | | **2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | | | | | | | | | |
| | | 17 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 1200 | 2400 | 1200 | 3600 | 3600 | | | | | |
| | | 18 | Խառնարանի հանում և տեղադրում | 2400 | 2400 | 2400 | 0 | 0 | | | | | |
| | | 19 | Խառնարանի վերանորոգում | 6000 | 6000 | 6000 | 0 | 0 | | | | | |
| | | 20 | Օդի զտիչի փոխարինում | 1800 | 1800 | 1800 | 2400 | 2400 | | | | | |
| | | 21 | Ինժեկտորի ֆորսունկաների հանում և տեղադրում | 10800 | 10800 | 10800 | 10800 | 10800 | | | | | |
| | | 22 | Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում | 10800 | 10800 | 10800 | 10800 | 10800 | | | | | |
| | | 23 | Բենզամղիչի փոխարինում | 9600 | 4800 | 9600 | 9600 | 9600 | | | | | |
| | | 24 | Վառելիքի զտիչի փոխարինում | 1800 | 2400 | 1800 | 2400 | 2400 | | | | | |
| | | | **3. Սառեցման և արտածման համակարգ** | | | | | | | | | | |
| | | 25 | Փոկի հանում և տեղադրում | 3600 | 3600 | 3600 | 6000 | 6000 | | | | | |
| | | 26 | Հովհարի հանում և տեղադրում | 3600 | 4200 | 6000 | 6000 | 6000 | | | | | |
| | | 27 | Ռադիատորի հանում և տեղադրում | 4800 | 7200 | 4800 | 9600 | 9600 | | | | | |
| | | 28 | Ռադիատորի վերանորոգում | 6000 | 6000 | 1200 | 6000 | 6000 | | | | | |
| | | 29 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | 6000 | 120 | 6000 | 6000 | 6000 | | | | | |
| | | 30 | Ջերմաստատի փոխարինում | 3600 | 3600 | 3600 | 6000 | 6000 | | | | | |
| | | 31 | Ջրի պոմպի փոխարինում | 6000 | 6000 | 6000 | 9000 | 9000 | | | | | |
| | | 32 | Խլարարի հանում և տեղադրում | 3600 | 3600 | 3600 | 4800 | 4800 | | | | | |
| | | 33 | Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում | 2400 | 2400 | 2400 | 3000 | 3000 | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | **4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | | | | | | | | | | |
| | | 34 | Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում | 2400 | 2400 | 2400 | 3600 | 3600 | | | | | |
| | | 35 | Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում | 1200 | 960 | 10 | 10 | 10 | | | | | |
| | | 36 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | 10 | 10 | 10 | 10 | 10 | | | | | |
| | | 37 | ՓՏ-ի հանում և տեղադրում | 18000 | 36000 | 15000 | 60000 | 60000 | | | | | |
| | | 38 | ՓՏ-ի վերանորոգում | 18000 | 36000 | 12000 | 108000 | 108000 | | | | | |
| | | 39 | ՓՏ-ի առանցքակալի փոխարինում | 10 | 10 | 10 | 10 | 10 | | | | | |
| | | 40 | ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում | 10 | 10 | 10 | 10 | 10 | | | | | |
| | | 41 | Վաքքայափի շարժարերի փոխարինում | 600 | 600 | 600 | 600 | 600 | | | | | |
| | | 42 | ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում | 0 | 0 | 0 | 12000 | 12000 | | | | | |
| | | | **5. Կախոց** | | | | | | | | | | |
| | | 43 | Առջևի կամ հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում | 2400 | 3600 | 2400 | 9600 | 9600 | | | | | |
| | | 44 | Կիսասռնու առանցքակալի փոխարինում | 10 | 10 | 900 | 1800 | 1800 | | | | | |
| | | 45 | Տրավերսի հանում և տեղադրում | 6000 | 12000 | 12000 | 30000 | 30000 | | | | | |
| | | 46 | Հողակապի հանում և տեղադրում | 7200 | 7200 | 7200 | 12000 | 12000 | | | | | |
| | | 47 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | 4800 | 6000 | 4800 | 12000 | 12000 | | | | | |
| | | 48 | Զսպակի վռանների փոխարինում | 3000 | 4200 | 10 | 10 | 4800 | | | | | |
| | | 49 | Հարվածամեղմիչի հանում և տեղադրում | 1800 | 4800 | 3600 | 6000 | 6000 | | | | | |
| | | 50 | Լծակի հանում և տեղադրում | 4800 | 10 | 3600 | 9000 | 9000 | | | | | |
| | | 51 | Լծակի վռանների փոխարինում | 900 | 10 | 900 | 2400 | 2400 | | | | | |
| | | 52 | Ղեկային ձգանի հանում և տեղադրում | 2400 | 2400 | 2400 | 3600 | 3600 | | | | | |
| | | 53 | Գնդե հողակապերի փոխարինում | 1800 | 1800 | 1200 | 1800 | 1800 | | | | | |
| | | 54 | Ծայրակաների հանում և տեղադրում | 1800 | 1800 | 1800 | 1800 | 1800 | | | | | |
| | | 55 | Կայունարարի վռանի փոխարինում | 2400 | 2400 | 2400 | 3600 | 3600 | | | | | |
| | | 56 | Հետևի մետաղաձողի հանում և տեղադրում | 10 | 600 | 1200 | 2400 | 2400 | | | | | |
| | | 57 | Կայունարարի կանգնակի հանում և տեղադրում | 1500 | 10 | 1200 | 3000 | 3000 | | | | | |
| | | 58 | Անվաբացքի կարգավորում | 7200 | 7200 | 7200 | 12000 | 12000 | | | | | |
| | | 59 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում | 2400 | 6000 | 2400 | 7200 | 7200 | | | | | |
| | | 60 | Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում | 2400 | 3600 | 2400 | 4800 | 4800 | | | | | |
| | | 61 | Ղեկային կալունի հանում և տեղադրում | 9600 | 18000 | 9600 | 24000 | 24000 | | | | | |
| | | 62 | Ղեկային կալունի վերանորոգում | 9600 | 18000 | 9600 | 36000 | 36000 | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 6. Արգելակային համակարգ | | | | | |
| 63 | Արգելակման գլխ. կամ բանվ. գլանի հանում և տեղադրում | 3600 | 4800 | 3600 | 6000 | 6000 |
| 64 | Արգելակման գլխ. կամ բանվ. գլանի նորոգում | 1200 | 1200 | 10 | 10 | 10 |
| 65 | Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում | 6000 | 9000 | 8400 | 12000 | 12000 |
| 66 | Արգելակային համակարգի օդահանում | 1800 | 2400 | 1800 | 2400 | 2400 |
| 67 | Արգելակային փողրակի փոխարինում | 2400 | 3600 | 2400 | 3600 | 3600 |
| 68 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | 3000 | 4800 | 2100 | 4800 | 4800 |
| 69 | Հետևի արգելակային կոճղակների փոխարինում | 7200 | 9000 | 4200 | 4800 | 4800 |
| 70 | Արգելակային սկավառակի փոխարինում | 2400 | 10 | 2400 | 4800 | 4800 |
| 71 | Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում | 2400 | 2400 | 2400 | 6000 | 6000 |
| | 7. Էլեկտրասարքավորում | | | | | |
| 72 | Էլեկտրասարքավորման վերանորոգում | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 |
| 73 | Չափիչ սարքերի հանում և տեղադրում | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 74 | Գեներատորի հանում և տեղադրում | 3600 | 6000 | 3600 | 6000 | 6000 |
| 75 | Գեներատորի վերանորոգում | 6000 | 7200 | 6000 | 12000 | 12000 |
| 76 | Մեկնարկիչի հանում և տեղադրում | 3600 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 77 | Մեկնարկիչի վերանորոգում | 6000 | 6000 | 6000 | 12000 | 12000 |
| 78 | Բռնկման կոճլեքի հանում և տեղադրում | 6000 | 6000 | 6000 | 9000 | 9000 |
| 79 | Էլեկտրական տվիչների փոխարինում | 2400 | 2400 | 2400 | 3600 | 3600 |
| 80 | Էլեկտրական անջատիչների փոխարինում | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 |
| 81 | Վառոցքի մոմերի փոխարինում | 1800 | 2400 | 1800 | 3600 | 3600 |
| 82 | Կոնդիցիոների լիցքավորում | 0 | 0 | 0 | 14400 | 14400 |
| | 8. Այլ ծառայություններ | | | | | |
| 83 | Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 |
| 84 | Անվադողի քանդում և հավաքում | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 |
| 85 | Անիվի հավասարակշռում | 1200 | 1800 | 1200 | 1200 | 1200 |
| 86 | CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 |
| 87 | Խառատային աշխատանքներ | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 |
| 88 | Փականագործի աշխատանքներ | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 |
| 89 | Քարշակի ծառայություն գին 1կմ. համար | 600 | 600 | 600 | 600 | 600 |

| | Ընդամենը ծառայություններ | 420530 | 527240 | 412440 | 828540 | 833330 |
|---|---|---|---|---|---|---|
| | SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայլուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | ԳԱԶ և ՈւԱԶ մակնիշի ա/մ | «Սադկո» մակնիշի բեռնատար և «ՊԱԶ» մակնիշի ավտոբուս ա/մ | ՎԱԶ և Շևրոլե Նիվա մակնիշի ա/մ | 5 տեղ առջևի և հետևի քաշող ա/մ | 5 տեղ և ավելի 4X4 տիպի մարդատար ա/մ |
| | 1.Շարժիչ | | | | | |
| 1 | Բարձիկ | 6000 | 8000 | 6000 | 30000 | 30000 |
| 2 | Շարժիչի փական | 2400 | 3600 | 2400 | 6000 | 6000 |
| 3 | Շարժիչի փականի խցուկ | 300 | 300 | 300 | 900 | 900 |
| 4 | Ծնկաձև լիսեռի խցուկ | 720 | 720 | 720 | 6000 | 6000 |
| 5 | Ծնկաձև լիսեռի ներդիրներ | 4200 | 4200 | 4200 | 6000 | 6000 |
| 6 | Հենակային տափողակ | 500 | 500 | 500 | 500 | 500 |
| 7 | Մխոց | 4800 | 4800 | 4800 | 15000 | 15000 |
| 8 | Մխոցային օղակներ | 9600 | 9600 | 9600 | 30000 | 30000 |
| 9 | Ատամնանիվ | 2400 | 2400 | 2400 | 6000 | 6000 |
| 10 | Ատամնավոր փոկ | 10 | 10 | 4800 | 12000 | 12000 |
| 11 | Շղթա | 6000 | 10 | 6000 | 10000 | 10000 |
| 12 | Հիդրոծգան | 3600 | 10 | 3600 | 7200 | 7200 |
| 13 | Հրիչ | 3600 | 3600 | 3600 | 1000 | 1000 |
| 14 | Հիդրոհրիչ | 6000 | 1000 | 6000 | 8000 | 8000 |
| 15 | Քաշման | 2400 | 1000 | 2400 | 4800 | 4800 |
| 16 | Հանգստարար | 2400 | 1000 | 2400 | 4800 | 4800 |
| 17 | Խցուկ բաշխիչ լիսեռի | 10 | 10 | 1200 | 3000 | 3000 |
| 18 | Շարժաթև | 4800 | 4800 | 4800 | 6000 | 6000 |
| 19 | Միջադիր | 2400 | 3600 | 2400 | 6000 | 6000 |
| | 2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ | | | | | |
| 20 | Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 |
| 21 | Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 22 | Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 |
| 23 | Յուղի զտիչ | 1500 | 2400 | 1500 | 6000 | 6000 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 24 | Վառոցքի մոմ | 1800 | 1800 | 1800 | 7200 | 7200 | | | | | |
| | | 25 | Վառելանյութի մղիչ | 19980 | 19980 | 19980 | 42000 | 42000 | | | | | |
| | | 26 | Վառելանյութի զտիչ | 3000 | 4000 | 2400 | 12000 | 12000 | | | | | |
| | | 27 | Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման | 10 | 10 | 10 | 10 | 10 | | | | | |
| | | 28 | Վառելանյութի փողրակ | 2400 | 2400 | 2400 | 6000 | 6000 | | | | | |
| | | 29 | Օդի զտիչ | 3600 | 3600 | 2400 | 12000 | 12000 | | | | | |
| | | 30 | Ջերմաստիճանային տվիչ | 10 | 10 | 10 | 10 | 10 | | | | | |
| | | 31 | Յուղի տվիչ | 2400 | 3000 | 2400 | 3600 | 3600 | | | | | |
| | | 32 | Բաշխիչ լիսեռի տվիչ | 4000 | 500 | 4000 | 8000 | 8000 | | | | | |
| | | 33 | Արագաչափի տվիչ | 4800 | 10 | 4800 | 7920 | 7920 | | | | | |
| | | 34 | Ջրի տվիչ | 2400 | 1000 | 2400 | 1000 | 1000 | | | | | |
| | | 35 | Բենզոբաքի տվիչ | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | | | | | |
| | | 36 | Սարման ընթացքի կարգավորիչ | 10 | 10 | 10 | 10 | 10 | | | | | |
| | | 37 | Պարապ ընթացքի տվիչ | 12000 | 10 | 6000 | 8000 | 8000 | | | | | |
| | | | **3. Սառեցման և արտածման համակարգ** | | | | | | | | | | |
| | | 38 | Ռադիատոր | 54000 | 48000 | 24000 | 54000 | 54000 | | | | | |
| | | 39 | Ռադիատորի փողրակ | 2400 | 3000 | 2400 | 6000 | 6000 | | | | | |
| | | 40 | Թերմոստատ | 3600 | 3600 | 6600 | 7800 | 7800 | | | | | |
| | | 41 | Ջրի պոմպ | 18000 | 12000 | 9600 | 30000 | 30000 | | | | | |
| | | 42 | Սառեցման հեղուկ լիտր | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 | | | | | |
| | | 43 | Յոլովակ | 4200 | 4200 | 4200 | 6000 | 6000 | | | | | |
| | | 44 | Փոկ | 3600 | 6000 | 6000 | 15000 | 15000 | | | | | |
| | | 45 | Խլարարի ներդիր | 600 | 600 | 600 | 1000 | 1000 | | | | | |
| | | 46 | Խլարարի կախոց | 600 | 600 | 1200 | 1800 | 1800 | | | | | |
| | | 47 | Անուր (խամուտ) | 300 | 300 | 300 | 300 | 300 | | | | | |
| | | 48 | Խլարար | 16800 | 16800 | 16800 | 30000 | 30000 | | | | | |
| | | 49 | Ռեզոնատոր | 10 | 10 | 10 | 10 | 10 | | | | | |
| | | 50 | Վառարանի ռադիատոր | 9000 | 9000 | 9000 | 12000 | 12000 | | | | | |
| | | | **4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | | | | | | | | | | |
| | | 51 | Կցորդման գլան | 9000 | 9000 | 7200 | 10800 | 10800 | | | | | |
| | | 52 | Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու | 500 | 500 | 10 | 10 | 10 | | | | | |
| | | 53 | Կցորդման տանող սկավառակ | 30000 | 30000 | 30000 | 48000 | 48000 | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 54 | Կցորդման տարվող սկավառակ | 12000 | 15000 | 10200 | 30000 | 30000 | | | | | |
| | | 55 | Կցորդման առանցքակալ | 6000 | 6000 | 10200 | 12000 | 12000 | | | | | |
| | | 56 | ՓՏ-ի խցուկ | 600 | 600 | 600 | 2400 | 2400 | | | | | |
| | | 57 | ՓՏ-ի առանցքակալ | 6000 | 6000 | 6000 | 12000 | 12000 | | | | | |
| | | 58 | ՓՏ-ի եղանիկ | 3600 | 3600 | 3600 | 9000 | 9000 | | | | | |
| | | 59 | ՓՏ-ի ատամնանիվ | 8000 | 8000 | 8000 | 24000 | 24000 | | | | | |
| | | 60 | Համաժամիչ | 4200 | 4200 | 4200 | 9000 | 9000 | | | | | |
| | | 61 | Մուֆտ | 5400 | 5400 | 5400 | 9000 | 9000 | | | | | |
| | | 62 | ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ | 1200 | 1200 | 1200 | 42000 | 42000 | | | | | |
| | | 63 | ԱՓՏ-ի զտիչ | 0 | 0 | 0 | 12000 | 12000 | | | | | |
| | | 64 | Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր | 3000 | 3000 | 3000 | 3600 | 3600 | | | | | |
| | | 65 | ԱՓՏ յուղ, 1 լիտր | 0 | 0 | 0 | 9600 | 9600 | | | | | |
| | | 66 | Հերմետիկ | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | | | | | |
| | | | 5. Կախոց | | | | | | | | | | |
| | | 67 | Կիսասռնի | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | | | | | |
| | | 68 | Կիսասռնու առանցքակալ | 4800 | 10 | 3600 | 10200 | 10200 | | | | | |
| | | 69 | Կիսասռնու խցուկ | 900 | 10 | 720 | 2400 | 2400 | | | | | |
| | | 70 | Կարգավորիչ տափողակ | 600 | 600 | 600 | 900 | 900 | | | | | |
| | | 71 | Կրոնշտեյն | 2000 | 2000 | 2000 | 2000 | 2000 | | | | | |
| | | 72 | Հողակապ | 10 | 0 | 24000 | 39000 | 39000 | | | | | |
| | | 73 | Հողակապի փոշեթիկնոց | 10 | 0 | 1200 | 4800 | 4800 | | | | | |
| | | 74 | Անվակունդի խցուկ | 600 | 600 | 600 | 1000 | 1000 | | | | | |
| | | 75 | Անվակունդի առանցքակալ | 4800 | 4800 | 4000 | 18000 | 18000 | | | | | |
| | | 76 | Հարվածամեղմիչ | 13200 | 18000 | 18000 | 48000 | 48000 | | | | | |
| | | 77 | Հարվածամեղմիչի վռան | 360 | 360 | 360 | 1500 | 1500 | | | | | |
| | | 78 | Լծակի վռան | 3000 | 10 | 2400 | 7200 | 7200 | | | | | |
| | | 79 | Գնդե հոդակապ | 6000 | 10 | 6000 | 7200 | 7200 | | | | | |
| | | 80 | Կայունարարի վռան | 900 | 900 | 900 | 4200 | 4200 | | | | | |
| | | 81 | Հետևի ձգաձողի (շտանգա) վռան | 10 | 10 | 360 | 4800 | 4800 | | | | | |
| | | 82 | Զսպակի վռան | 2640 | 2000 | 10 | 10 | 3600 | | | | | |
| | | 83 | Ղեկային ձգան | 7200 | 7200 | 7200 | 18000 | 18000 | | | | | |
| | | 84 | Կայունարարի կանգնակ | 2700 | 10 | 3000 | 8000 | 8000 | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 85 | Ղեկային ձգանի ծայրակալ | 3600 | 3600 | 3600 | 7200 | 7200 |
| 86 | Կարդանային լիսեռի խաչուկ | 6000 | 9000 | 6000 | 15000 | 15000 |
| 87 | Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր | 3000 | 3000 | 3000 | 6000 | 6000 |
| | **6. Արգելակային համակարգ** | | | | | |
| 88 | Արգելակման գլխ. գլան | 9000 | 9000 | 9000 | 30000 | 30000 |
| 89 | Վակուումային ուժեղարար | 30000 | 30000 | 30000 | 36000 | 36000 |
| 90 | Արգելակման բանվ. գլան | 4800 | 4800 | 4800 | 8000 | 8000 |
| 91 | Արգելակման գլանի վերանորոգման հավաքածու | 1000 | 1000 | 10 | 10 | 10 |
| 92 | Արգելակային փողրակ | 2400 | 6000 | 2400 | 9000 | 9000 |
| 93 | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | 6000 | 10000 | 6000 | 36000 | 36000 |
| 94 | Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | 10800 | 12000 | 10800 | 30000 | 30000 |
| 95 | Արգելակային սկավառակ | 18000 | 10 | 15000 | 30000 | 30000 |
| 96 | Ձեռքի արգելակի ճոպան | 6000 | 5000 | 6000 | 12000 | 12000 |
| 97 | Արգելակային հեղուկ | 1500 | 1500 | 1500 | 2400 | 2400 |
| | 7. Էլեկտրասարքավորում | | | | | |
| 98 | Գեներատորի դիոդային կամրջակ | 7800 | 7800 | 7800 | 18000 | 18000 |
| 99 | Գեներատորի ռելե | 4200 | 4200 | 4200 | 4800 | 4800 |
| 100 | Գեներատորի առանցքակալ | 1800 | 1800 | 1800 | 3000 | 3000 |
| 101 | Ստարտերի ռելե | 2100 | 2100 | 2100 | 7200 | 7200 |
| 102 | Բենդեքս | 8400 | 8400 | 7800 | 15000 | 15000 |
| 103 | Ստարտերի ածուխ | 4000 | 4000 | 4000 | 6000 | 6000 |
| 104 | Ստարտերի կցորդիչ (ավտոմատ) | 4800 | 4800 | 4800 | 15000 | 15000 |
| 105 | Լամպ | 2400 | 2400 | 2400 | 6000 | 6000 |
| 106 | Բռնկման կոճակ | 12000 | 6000 | 14000 | 18000 | 18000 |
| 107 | Էլեկտրական անջատիչ | 2400 | 2400 | 2400 | 4800 | 4800 |
| 108 | Էլեկտրական տվիչ | 9000 | 9000 | 9000 | 30000 | 30000 |
| 109 | Վառոցքային լարերի խումբ | 6600 | 6600 | 6600 | 10000 | 10000 |
| 110 | Վառոցքի մոմի ծայրակալ | 1000 | 900 | 1800 | 3600 | 3600 |
| 111 | Ապակելվացիչ | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 |
| 112 | Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորոգման համար | 3600 | 3600 | 3600 | 3600 | 3600 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը պահեստամասեր | 565990 | 501330 | 555310 | 1239490 | 1243080 | | | | | |
| | | Ընդամենը ըստ մակնիշների | 986520 | 1028570 | 967750 | 2068030 | 2076410 | | | | | |
| | | **Ընդամենը ըստ չափաբաժնի** | 7127280 | | | | | | | | | |

ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

Վարչության պետ՝
Ռ. Հովհաննիսյան

/ստորագրություն/

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ

Ք. Երևան, Տիգրանյան I. փակ. 1
«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217002121630001
ՀՎՀՀ 00131374

Տնօրեն ________ Ա. Հովսեփյան

*Հավելված N 2*
*« 20 » փետրվարի 2018թ. կնքված*
*ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԾՁԲ-18/4-(1) ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում** | | | | |
| | | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | Ընդամենը |
| 1 | 50111130/1 | Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ | 712790 | 3065000 | 5420000 | 7127900 | 7127900 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
ք. Երևան, Արշակունյաց 63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
Վարչության պետ՝
Ռ.Հովհաննիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ
Ք. Երևան, Տիգրանյան 1, փակ. 1
«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217002121630001
ՀՎՀՀ 00131374
Տնօրեն ________ Ա. Հովսեփյան

"КАРКОМАВТО СЕРВИС" "KARCOMAUTO SERVICE" 00131374

*Հավելված 3*
*«20» փետրվարի 2018թ կնքված*
*ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԾՁԲ-18/4-(I) ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը
ՀՀ
ՀՎՀՀ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
Վարչության պետ՝
Ռ.Հովհաննիսյան

/ստորագրություն/

Կ.Տ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«      » «                    » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ____________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ________
Պատվիրատուն՝ ի դեմս ____________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս ____________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«10» փետրվարի 2018թ. կնքված*
*ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԾՁԲ-18/4-(1) ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը                                                  Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________-ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                                          պայմանագրի համարը

**գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.**

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |